25.210

332.2
Ч-64

05 JAN 2018

-64

...ԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

332.2
Ա-64

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ!

# ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՎՈՐՏԵ՞Ղ ՊԵՏՔ Ե ՊԱՀԵՆ ԻՐԵՆՑ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Ա. Ս. Խ. Ֆ. Հ. ՖԻՆԺՈՂԿՈՄԻ

ԹԻՖԼԻՍ — 1925 Թ.

19.02.2013

25.210

36077-62

ՊՈԼԻԳՐԱՖԴՊՐՈՑ, ԳԱՆՈՎՑԱՆ ՓՈՂ. 3.

Տիրաժ 2000. ԹԻՖԼԻՍ—1925 Գլավլ. 1156.

# ԻՆՉԻ՞ ՎՐԱ ՅԵ՛Ն ԾԱԽՍՎՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂ՛ՆԵՐԻ ԴՐԱՄ՛ՆԵՐԸ

Ամեն մի քաղաքում և համարյա ամեն մի մեծ գյուղում կա Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղ։ Յուրաքանչյուր բանվոր, գյուղացի և յուրաքանչյուր քաղաքացի շատ անգամ լսած կլինի այդ գանձարկղների մասին և նույնպես շատ անգամ լսած կլինի Խորհրդային Պետության դիմումները իր քըրտինքով աշխատած կոպեկների խնայողությունը մըտցնել պետական աշխատավորական խնայողական գանձարկղը։

Բայց վոչ ամեն վոք և վոչ ամենքը բավարար գիտեն կամ հասկանում և կամ հաշիվ են տալիս իրենց, թե արդյոք ինչ ոգուտ ունեն այդ գանձարկղները մեր տնտեսության կամ ամբողջ Խորհրդային Պետության համար։

Թե գյուղերում և թե քաղաքներում և թե ամեն տեղ, վորտեղ աշխատավոր բնակչություն շատ կա, Խորհրդային Իշխանությունը բացում ե Աշխատավորական Խնայողական Գանձարկղներ։ Իսկ Խորհրդային Իշխանությունը աննպատակ վոչինչ չի անում. ինչ վոր անում ե, անում ե գյուղացիների և բանվորների ոգտի հա-

մար. հետևապես, այդ Աշխատավորական Գանձարկղները՝ աշխատավորների համար անհրաժեշտ են։

Բայց կարող է պատահել, որ մեկն ասի — «Չէ՞ որ թագավորի կառավարության որով էլ կային խնայողական գանձարկղներ, որոնք ծառայում էին հողատերերի և կապիտալիստների ոգտին. արքայական կառավարությունը աշխատավորների համար շատ քիչ էր հոգ տանում, ուրեմն էլ ինչումն է տարբերությունը»։

Այժմ տեսնենք, թե ինչ տարբերություն կա ցարական և այժմյան աշխատավորական խնայողական գանձարկղների միջև։

Ո՞վ էր արդյոք թագավորի ժամանակ ոգտվում աշխատավորների խնայած կոպեկներից։

Ցարական կառավարության ժամանակ կային մի քանի հազար խնայողական գանձարկղներ, կային քաղաքներում, փոստ-հեռագրական բաժանմունքներում, յերկաթուղու կայարաններում։ Այդ գանձարկղներում գտնվում էր տասը միլիոն մարդու մտցրած յերկու և կես միլիարդ ռուբլի դրամը, որի համարյա կեսը պատկանում էր աշխատավորներին։

Այդպես, թագավորական խնայողական գանձարկղներում կոպեկներով և ռուբլիներով հավաքվել էր գյուղացիների և բանվորների վաստակած մեկ միլիարդ դրամը. բայց խնդիրը նրանումն է, որ այդ դրամները տնորինում էին թագավորի նախարարը (որը կոմս և կամ իշխան էր լինում) և նրա ոգնականները — այն է՝ ցարական չինովնիկները։ Յեվ շատ պարզ է, որ Խնայողական Գանձարկղներում գտնված գյուղացու և բանվորի ծանր աշխատանքով հավաքած դրամները նրանք



գործադրում էին իրենց ոգտի համար, իրենց դասակարգի ոգտի համար, այսինքն՝ գործարանատիրոջ և հողատիրոջ համար։

Այժմ այնպես չէ, այժմ, յերբ աշխատավորը Խորհրդային Պետության մեջ դրամ է խնայում, նա դրանով ոգնում է ինքն իրեն։

Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղները հենց այն պատճառով էլ կոչվում են աշխատավորական, որ աշխատավորը հոգուտ հենց իր սեփական և ամբողջ դասակարգի շահերի, իր աշխատավարձը և աշխատավորական իր խնայողությունները պահում է այնտեղ։ Այժմ Խորհրդային Իշխանության որով այդ գանձարկղների ամբողջ ոգուտը աշխատավոր ժողովուրդի համար է։

Մինչև մեր դրամների նոր բարենորոգումը, այսինքն՝ մինչև կայուն դրամանիշների և արծաթի դրամների բաց թողնելը, դրամների արժեքը ընկնում էր որեցոր։

Աշխատավորները դրամների այդ անկման ժամանակ վնասվում էին։

Ստացած աշխատավարձի արժեքը որեցոր նվազում էր, յեթե այդ դրամները նրանք պահում էին իրենց մոտ. իսկ այն դրամները, որոնք դրված էին Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղներում, պետությունը ինքն էր ապահովում անկումից և ավանդները ընդունում ու տալիս էր չերվոնեցների հաշվով, որվա արժեքի համաձայն և այդ ձևով աշխատավորներին ոգնում էր իրենց աշխատավարձը պահպանելու։

Գանձարկղներում դրված ավանդները գտնվում են բանվորական և գյուղացիական պետության տրամա-

գրության տակ, և այդ դրամները ծախսվում են երկրի տնտեսության բարելավման համար:

Հարկավոր է երկրագործական գործիքներ հասցնել գյուղը, որպեսզի հողը ավելի լավ մշակվի:

Հարկավոր է համարյա բոլոր գործարանները վերանորոգել և նոր մեքենաներ գնել:

Գործարաններում՝ սարքի մեքենաները կբարելավեն արդյունաբերությունը:

Գյուղում՝ նոր գյուղատնտեսական գործիքները կբարձրացնեն բերքը:

Խորհրդային Իշխանությունը Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղից և նաև վերցնում տնտեսությունը կազմակերպելու համար միջոցներ՝ որը սակայն ըստ առաջին պահանջի, հետ է դարձնում ավանդատուին, տոկոսների հետ միասին:

Որքան շատ ավանդատու — այնքան էլ շատ դրամ: Հետևապես այնքան էլ հեշտ է տնտեսությունը կարգի բերել:

Ահա թե նոր Աշխատավորական Խնայողական Գանձարկղներից ուր են գնում դրամները և ինչի վրա յեն ծախսվում:

**Բոլորը պետք է խնայողություն ունենան:**

Ույժը՝ միության մեջ է: Միահամուռ կերպով հըրդեհի առաջը հեշտ կարելի յե առնել և միահամուռ կերպով քայքայված դրությունը հեշտ կարելի յե վերականգնել:

Բոլոր բանվորները և գյուղացիները պետք է Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղնե-



րի ավանդատուները լինեն: Ով ունի դրամի ավելցուկ՝ թող տանի Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղը. իսկ ով չունի ավելցուկ՝ թող տանի ձեռքի տակ յեղած դրամները մտցնի, որոնք ընթացիկ ծախսերի համար անմիջապես նրան հարկավոր չեն:

Ստացած ռոճիկը միշտ միանգամից չի ծախսվում:

Դրամը գրպանում իզուր տեղը պիտի պառկի. այն ինչ, գանձարկղում նա շահ կբերի: Յեթե իր կոպեկները գանձարկղ տանի մի բանվոր, մի գյուղացի ու մի պաշտոնյա և ապա յերկրորդը, յերրորդը, այդ ձևով կհավաքվի դրամի մի մեծ գումար, որը մեր յերկրի տնտեսությունը բարելավելու համար կդրվի շրջանառության մեջ և այդ միջոցով կբարելավվի բոլոր աշխատավորների դրությունը:

Կյանքը աստիճանաբար կարգի կընգնի:

Յեվ այդ ամենը անելու կօգնեն բանվորները և գյուղացիները Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղներում յեղած իրենց ավանդներով:

Բանվորները և գյուղացիները իրենք առաջ բերին հեղափոխություն և հին կարգերը խորտակեցին, նրանք իրենք էլ կբարելավեն կյանքը և կստեղծեն Խորհրդային Պետության նոր, ավելի լավ տնտեսություն:

**Դրամատուփը (ղուլաբը) — դրամի գերեզմանն է.**

Գյուղացին ձեռք է բերում մի ավելորդ ռուբլի, որը և նա իր տանը մի ծածուկ տեղ պահում է դրամատուփի մեջ:

Կամ թե, բանվորը ստանալով աշխատավարձը՝ դնում է գրպանը:

Այդ դրամները պառկել են դրպանում կամ դրամատուփի մեջ վորպես մեռած:

Վորքան էլ նրանք այնտեղ պառկեն — միևնույն է վոչ օգուտ կբերեն և վոչ էլ շրջանառության մեջ կը մտնեն:

Վոչ պետությունը և վոչ դրանց պահողը մեռած դրամից օգուտ չունեն:

Իսկ յեթե հաշվելու լինենք՝ թե Խորհրդային Միության մեջ այդպիսի վորքան դրամատուփեր կան, այն ժամանակ կտեսնենք, վոր մեր յերկրում պառկած են տասնյակ միլիոն այդպիսի մեռած ռուբլիներ:

Յերբեմն պատահում է, վոր բանվորն էլ, պաշտոնյան էլ ունենում են պահած դրամ:

Կան ասողներ, վոր դրանից վնաս չկա:

Բայց իրոք վնասը շատ մեծ է:

Յեթե կառավարությունը Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղներից դրամ է վերցնում, նա այդ դրամը տնտեսությունը բարելավելու նպատակով շրջանառության մեջ է դնում:

Յեթե դրամը պառկած է դրամատուփում՝ նշանակում է, վոր Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղները ավելի սակավ դրամ է մտնում, ուրեմն և դժվարությամբ կարելի յե կարգի քցել տնտեսությունը:

Այն բանվորները, վորոնք դրամը պահում են տանը, դրանով նրանք պետությանը չեն օգնում տնտեսությունը բարելավելու դժվարին գործում և իրենց էլ անձնապես վոչ թե օգուտ են բերում, այլ վնաս:



**Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղները տարածված են Միության բոլոր Հանրապետություններում.**

Ա. Խ. Հ. Միության մեջ արդեն 4 հազարից ավելի նոր Աշխատավորական Խնայողական Գանձարկղներ են բացված. իսկ մինչև հոկտեմբեր պիտի բացվեն 8 հազար: Մեզ մոտ Անդր-Կովկասում 185 պունքտ է բացված, ուր բանվորը, գյուղացին և պաշտոնյան կարող են մացնել իրենց աշխատավորական խնայողությունները:

Ամեն մի քաղաքում կա Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղ:

Փոստ-հեռագրական բաժանմունքում կան Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղներ:

Յերկաթուղու կայարաններում նույնպես կան գանձարկղներ:

Կարմիր բանակայինների և զինվորական ծառայողների համար հատկացրած գանձարկղները գտնվում են դաշտային գանձարաններին կից:

Մեծ քանակությամբ գանձարկղներ են բացվում գյուղերի և շեների գործկոմների, խորհուրդների և խորհրդային տնտեսություններին կից:

Խորհրդային կառավարությունը աշխատում է հեշտացնել դրամների մուտքը գանձարկղ:

Վորպեսզի բանվորները իզուր տեղը փողոցները չըչափչփեն և քաղաքի մի ծայրից մյուսը չգնան, այդ պատճառով հենց նրանց կողքին՝ գործարանում և կամ հիմնարկության մեջ բացված են Խնայողական Գանձարկղներ:

Ավելի հարմար է, որ իր ստացած ռոճիկը գրպանում քարշ չտա, այլ իսկույն և յեթ պահպանության համար մտցնի գանձարկղ, վորտեղից և դրամը կհանի հարկավորության յեղած դեպքում։

Գործարանների և հիմնարկությունների այդօրինակ Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղները կոչվում են Միջնորդական. ճիշտ է՝ այդպիսի գանձարկղներ մեզ մոտ քիչ կան, բայց աշնանից Ս. Ս. Ֆ. Խ. Հ-ում կսկսեն լայն կերպով տարածվել։

Բոլոր բանվորները, գյուղացիները և պաշտոնյաները իրենց դրամը պիտքե պահեն Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղում ու միահամուռ ույժերով ամրացնեն մեր ժողովրդական տնտեսությունը։

**Ո՞վ կարող է լինել Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղների ավանդատու.**

Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղների ավանդատուներ՝ կարող են լինել — տղամարդիկ, կանայք, գյուղացիներ, Կարմիր-բանակայիններ, բանվորներ և ծառայողներ։

Ավանդատուներ կարող են լինել նաև քաղաքացիները — տնայնագործներ, արհեստավորներ, բոստանչիներ և ուրիշները։

Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղներում դրամների ընդունելը և տալը կատարվում է շատ պարզ կերպով, այնպես որ անգրագետն էլ կարող է Գանձարկղի ավանդատու լինել։

Մինչև իսկ անչափահասներն էլ կարող են ավանդատուներ լինել։



Յեթե անչափահասը իր անունով ինքն է մտցնում ավանդը, այն ժամանակ այդ ավանդը ինքն է տնօրինում։

Իսկ յեթե մի վորևէ ուրիշն է դրամը մտցնում անչափահասի անունով, ապա՝ մինչև անչափահասի 14 տարեկան դառնալը, խնամակալն է տնօրինում այդ դրամը։

Իսկ 14 տարեկան դառնալուց հետո՝ խնամակալը կարող է տնօրինել դրամը միայն իրեն՝ անչափահասի համաձայնությամբ, վորի անունով գրված է ավանդը։

Ավանդները կարելի յե մտցնել վոչ միայն առանձին անձի անունով, այլ նույնպես կոլեկտիվների, ձեռնարկությունների կամ հիմնարկությունների անունով։

Այդպիսի կոլեկտիվ ավանդատուներ վարող են լինել — արհմիությունները, միությունների նահանգական բաժինները, միությունների կուլտբաժինները, զավկոմները, տեղկոմները, գյուղացիական կոմիտեները, գործկոմները, Խորհրդային տնտեսությունները և քաղաքի ու գյուղի ուրիշ կազմակերպությունները, վորոնք իրենց դրամական միջոցները պահ կտան Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղներին։

Հենց այդպես էլ ավելի ձեռնտու յե հասարակական կազմակերպությունների գումարները պահ տալ Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղներին. օրինակ՝ Մոպրի միջոցները, Լենինի անվան ֆոնդը, «Մանուկների Բարեկամ» Ընկերության, «Օդային Նավատորմի Բարեկամների» Ընկերության դրամները և ուրիշները։

**Մահվան դեպքում՝ ավելի լավ է ավանդները կտակել Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղերի միջոցով.**

Սովորաբար, վորպեսզի մահից հետո ժառանգությունը անցնի մի վորոշ անձի, հարկավոր է դրա համար կտակ գրել, գնալ նոտարի մոտ և շատ ձևականություններ կատարել:

Ժառանգն էլ դրամ ստանալու համար, նույնպես պիտի կատարի զանազան տեսակի անհրաժեշտ ձևականություններ:

Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղերում ընդհակառակը՝ այդ բանը կատարվում է շատ պարզ — ավանդատուն ուղղակի նշանակում է իր խնայողական գրքույկում, թե մահվան դեպքում նրա ավանդը ում պիտի տրվի կամ թե չէ՝ ավանդատուն Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղին հայտնում է միայն իր ժառանգի մասին:

Ավանդատուների մահից հետո՝ հիշյալ ժառանգը գանձարկղն է ներկայացնում խնայողական գրքույկը, մահվան մասին տեղեկանք, իր անձնական վկայականը և առանց գլխացավանքի ստանում է իրեն կտակած ավանդը:

**Ինչպե՛ս դրամը մտցնել Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղը:**

Դրամը կարելի յե Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղը մտցնել խնայողական գրքույկով կամ ընթացիկ հաշվով:

Յեթե դրամը խնայողական գրքույկով է մտցրած,



այն ժամանակ այդ դրամը ստանալու համար՝ հարկավոր է ներկայացնել միայն գրքույկը:

Անգրագետ մարդու համար ավելի լավ է դրամը մտցնել խնայողական գրքույկով:

Ընթացիկ հաշվով մտցրած դրամները տրվում են չեկերով:

Շատ հարմար է չեկերից օգտվելը, վորովհետև դրամ ստանալու համար՝ անձնապես գանձարկղը գնալու կարիք չկա, իսկ չեկը ում հետ ուզենաս, կարող ես ուղարկել (կտրիր չեկը, ստորագրիր և ուղարկիր):

Ընթացիկ հաշիվ պահելու համար՝ հարկավոր է անպատճառ գրագետ լինել, վորովհետև չեկերը հարկավոր է ստորագրել:

**Յուրաքանչյուր ավանդատու Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղից ստանում է իր օգուտ յեվ իր հարմարությունը:**

Յերբ մարդ գրպանում դրամ է պահում, յերբեմն գայթակղվելով՝ զանազան դատարկ բաներ է գնում. իսկ յերբեմն էլ՝ դեհ, գրպանում փող կա — կամ կխմի, կամ թուղթ կխաղա:

Դրամը խնայել անհրաժեշտ իրերի համար և իզուր տեղը չվատնել, դա ժլատություն չէ, և վոչ էլ գձուձություն, այլ պրոլետարական խելացի խնայողություն:

Խնայողական Աշխատավորական Գանձարկղը մարդկանց վարժեցնում է խնայողության:

Բացի դրանից, տանը դրամ պահելը — վտանգավոր է: Ով գիտի, կարող է պատահել գողություն, հրդեհ, կամ մի ուրիշ փորձանք:

Ավելի ապահով է դրամը Գանձարկղում պահել,
փորովհետև Պետական Աշխատավորական Խնայողական
Գանձարկղներում յեղած դրամների ամբողջության
համար՝ կառավարությունը միշտ պատասխանատու յե
և ամեն վարկյան պատրաստ է վերադարձնելու ավան-
դատուներին: Գանձարկղում դրամների պահելը վոչ
միայն ծրի յե, այլ նույնիսկ յեվ ոգտակար:
Պետական Աշխատավորական Խնայողական Գանձ-
արկղը բացի ավանդատուից վոչ վոքի չի հայտնում
նրա գրքույքով յեղած կամ ընթացիկ հաշվով ունեցած
դրամների գումարը:

**Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղը ավանդները գաղտնիք է պահում.**

Յերբ դրամը ընկած է տանը, մարդ ստիպված է
մտքում պահել,թե վորտեղ է այն թաքցրել, ինչքան է
ծախսել և ամեն անգամ հաշվել կանխիկ մնացորդը:
Այդ բոլորը մարդուս միայն հոգսի մեջ են քցում:
Իսկ յերբ դրամը պահվում է Պետական Աշխատա-
վորական Խնայողական Գանձարկղում, այն ժամանակ
միշտ գրքույկում ճիշտ կերպով, մինչև ամենավերջին
կոպեկը գրվում է, թե ավանդատուն վորքան դրամ ունի,
յերբ է վերցրված և վորքան և ինչքան էլ մնացել է:
Պետական Աշխատավորական Խնայողական Գանձ-
արկղը մենահավատարիմ յեվ ծրի զանձապահն է:
Պետական Աշխատավորական Խնայողական Գանձ-
արկղները հարմարեցրած են աշխատավորների համար
և այդ պատճառով էլ ընդունում են մանր մուծումներ
— 5, 10 կոպեկ և ավելի:



Այդ ձևով աշխատավարձից և յեկամուտից մանր
մուծանքներ կատարելով, մի վորոշ ժամանակում քիչ
քիչ կարելի է հավաքել մի մեծ գումար, վորով իհարկե
ավելի հեշտ է ձեռք բերել անհրաժեշտ իրերը:
Գանձարկղից դրամը հետ ստանալն էլ լիապես
ազատ է:
Դրամները կարելի յե ստանալ և բոլորը միասին և
մաս-մաս:

**Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղ-ների ավանդները տոկոսներ են բերում.**

Գանձարկղում պահվող դրամը բերում է տարին 6
տոկոս:
Մի ռուբլու փոխարեն ավանդատուն մի տարուց
հետո ստանում է մի ռուբլին և հետն էլ 6 կոպ. տո-
կոս: Տասը ռուբլու համար նա կստանա 60 կոպեկ. իսկ
100 ռուբլու համար նա տարին 6 ռուբլի ոգուտ կստա-
նա և այլն և այլն:
Յերբ դրամը մտցնում են յերկար ժամանակով, այդ
դեպքում ավանդը կոչվում է պայմանաժամական:
Պայմանաժամական ավանդների համար՝ տրվում է
վոչ թե 6 տոկոս, այլ յոթ և կես տոկս, այն
բանի համար, վոր Պետական Աշխատավորական Խնա-
յողական Գանձարկղը դրանով հնարավորություն է
ստանում, վորոշ և յերկար ժամանակով տնօրինելու
պայմանաժամական ավանդները: Գանձարկղում դրամի
տոկոսները նույնպես տոկոսներ են բերում,
Այդպես ուրեմն Խնայողական Գանձարկղում պահ
տված դրամը ավանդատուին դրամական ոգուտ է
բերում:

### Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղը հեշտացնում է գյուղացու համար ժամկետին հարկերի վճարումը:

Յեթե իր ժամանակին չի վճարվում հարկը, այնժամանակ դրան վրա յե գալիս տուգանքը և ստիպված վճարում է ավելի շատ:

Հարկը բոլորովին չվճարել — չի կարելի և վերջապես ամոթ էլ է, վորովհետև թագավորի ժամանակ հարկերը ծախսվում էյին պատերազմների և բուրժվաների քեֆերի համար. իսկ Խորհրդային Իշխանության ժամանակ հարկերը գործադրվում են բանվորա-գյուղացիական յերկիրը ամրացնելու վրա:

Թե գյուղացին ամբողջ դրամը մինչև հարկի ժամկետը տանը սկսի հավաքել, դժվար է: Որինակի համար գյուղացին, յենթադրենք, վաճառեց իր բերքի մի մասը և դրամը հարկի համար տանը թողեց: Դե՛հ, դրամը տանն է, մեկ էլ տեսար հակառակի պես մի փոքրիկ կարիք, վորի վրա ծախսվում է դրամը. յերբեմն էլ, դե՛հ, դրամը ձեռքին է, բոլորովին իզուր տեղն է ծախսում: Իսկ հարկի համար Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղում հետ դրած դրամը չի վատնվիլ:

### Կոմմունալ ծառայությունների համար վճարումները հարմար է կատարել Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղի միջոցով.

Թե բանվորին և թե ծառայողին դժվար է լինում ժամանակ գտնելու, վոր գնա և հաշիվների համաձայն վճարի կոմմունալ ծառայությունների համար (այսինքն



ջրի, ելեկտրականության կամ ազբահանության համար):

Ամեն տեղ հերթեր կան և ամեն տեղ հիմնարկը բաց է միայն այն ժամերին, յերբ ինքը զբաղված է գործարանում կամ հիմնարկության մեջ և այնտեղ գնալ չի կարող:

Խնայողական Գանձարկղը այստեղ էլ է հասնում ոգնության. հարկավոր է միայն կարգադրություն անել այն Գանձարկղին, վորտեղ ավանդն է պահվում և գանձարկղը դրամը կմուծի ուր հարկն է: Յերբ դրամ չկա, կոմմունալ ծառայությունների համար ժամկետին վճարները մոցնելու, ստիպված է վճարել տուգանքով, վորը սակայն ձեռնտու չէ: Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղը փոքրիկ մուծանքներ կատարելով հեշտությամբ կարելի յե կամաց կամաց հավաքել կոմմունալ ծառայությունների համար վճարելու անհրաժեշտ գումարը:

Այդպես ուրեմն բանից դուրս է գալիս, վոր թե վճարն է ժամկետին կատարվում և թե կարծես մաս մաս է վճարվում:

Նույն բանն է և ապահովագրության վերաբերյալ:

Կրակից կույքի ապահովագրության համար պահանջվելիք ապահովագինը կարելի յե մաս-մաս հավաքել Խնայողական Գանձարկղներում և նրա միջոցով էլ կատարել վճարումը: Դրա համար ինչպես և Կոմմունալ ծառայությունների հաշվետեսությունների ժամանակ, հարկավոր է Խնայողական Գանձարկղին միայն հայտարարել և գանձարկղը կվճարի: Նույն ձևով Խնայողական Գանձարկղների միջոցով կարելի յե մարել

հաշիվները այն կոոպերատիվի հետ, վորտեղ նա անդամագրված է։

Յերբեմն անձամբ դժվար է լինում գնալ Խնայողական Գանձարկղը, մանավանդ գյուղացուն՝ իր աշխատանքների ժամանակ։

Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղները հանձնարարությամբ ընդունում ու տալիս են մուծանքներ. մինչև իսկ գյուղից մեկը կարող է գնալ և ուրիշների հանձնարարությամբ դրամ հանձնել կամ ստանալ։

Կարիք չկա գյուղացուն անձամբ գնալ հարկը վճարելու. դրա փոխարեն կարող է հատուկ նամակով հայտնել Խնայողական Գանձարկղին, ցույց տալով հարկի քանակը, վորը և կմտցնի ուր վոր հարկն է։

Գանձարկղին ուղարկած այդպիսի նամակը կոչվում է հանձնարարական։

Խնայողական Գանձարկղը գյուղացու հավատարիմ ոգնականն է։

**Ձեռնտու յե ձեռք բերել պարտատոմսեր յեվ պահ տալ Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղում։**

Պետական փոխառությունների պարտատոմսերը թե հարմար է և թե հեշտ է գնել Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղում, վորովհետև ամենուրեք գանձարկղներ կան։

Իսկ ամենաեժան պարտատոմսը — դա գյուղացիական փոխառության պարտատոմսն է, վորը մի ռուբլուց ել պակաս արժե։

Սակայն միշտ, միանգամից չի վճարվում այդ ռուբլին։



Խնայողական Գանձարկղում կարելի յե կամաց կամաց մանր մուծաքներով դրամ հավաքել պետական փոխառությունների, դրանց թվում և գյուղացիական փոխառության պարտատոմսեր գնելու համար։

Պարտատոմսերի տանը պահելը չի կարելի ապահով համարել։ Կարող է գողություն պատահել կամ հրդեհ, կարող են և մկները կրծել այդ թղթերը։

Խնայողական Գանձարկղը ձրի կերպով պահում է պարտատոմսերը։

Գյուղացու համար առանձնապես դժվար է լինում հետևել, թե իր վիճակը տարել է արդյոք։ Ամեն մարդ ել տանը լրագիր չունի, վորով վիճակի մասին հնար լինի իմանալ։

Խնայողական Գանձարկղը այս բանումն ել է ոգնության հասնում և ինքը հետևում է վիճակներին։

Պարտատոմսերի տեղը կարելի յե ստանալ փոխատվություն։

Յերբեմն պատահում է, վոր պետական փոխառության պարտատոմսը գտնվում է Գանձարկղում. իսկ բանվորը կամ գյուղացին կանխիկ դրամի կարիք է զգում։

Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղը այստեղ ել իսկույն ոգնության է հասնում։

Գանձարկղը փոխատվություն է տալիս պարտատոմսը գրավ առնելով. բայց և այնպես պարտատոմսը չի կորչում։

Յեթե գրավ դրած պարտատոմսը վիճակախաղի մեջ տանում է, այն ժամանակ գանձարկղը այդ վիճակը հանձնում է ավանդատուին։

Այդպիսի արտոնություն լինում է միայն Աշխատավորական Խնայողական Գանձարկղներում:

Աշխատավորական Խնայողական Գանձարկղը գիտի, վոր յեթե ավանդատուն գրավ է դրել իր պարտատոմսը, այդ նշանակում է, վոր նա ծայր աստիճան դրամի կարիք ունի և նրան հարկավոր է ոգնել:

**Ավանդները Պետական Աշխատավորական Խնայողական մի գանձարկղից կարելի է փոխադրել միուսը**

Ավանդատուին մի այլ տեղ փոխադրելու դեպքում, (ծառայության փոխադրություն, տեղափոխություն կամ մի ուրիշ պատճառ) ավանդները, ավանդատուի ցանկությամբ, փոխադրվում են նրա բնակչության նոր տեղը:

Ավանդատուն Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղին հայտնում է իր տեղափոխության մասին և գանձարկղը նրա ցուցմունքների համաձայն ավանդը փոխադրում է Պետական Աշխատավորական ուրիշ գանձարկղ:

Միևնույն քաղաքում ավանդատուի ցանկությամբ կարելի յե ավանդները մի շրջանի գանձարկղից փոխադրել մի ուրիշ շրջանի գանձարկղ:

**Ավելի հեշտ է դրամը փոխադրել վոչ թե փոստով, այլ Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղների միջոցով:**

Գյուղացուն հարկավոր է դրամ ուղարկել քաղաք իր վորդուն կամ աղջկան:



Բանվորին հարկավոր է դրամը քաղաքից գյուղ փոխադրել:

Հարկավոր է մեկին դրամ ուղարկել Կարմիր Բանակ իր վորդուն:

Այս բոլորի համար փոստում յերբեմն մի ամբողջ ժամ քաշ պիտի գալ:

Ուղարկվում է ընդամենը 3 կամ 5 ռուբլի, բայց մարդ ստիպված է գնալ փոստը, այնտեղ հերթում կանգնել և մարկայի ու ստացման համար էլ ջոկ ծախսեր անել:

Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղը ազատում է ծախսերից, ազատում է ավելորդ գլխացավանքից, վորովհետև կարիք չկա դրա համար հատկապես փոստը գնալ:

Ամեն տեղ էլ կան Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղներ, վորոնց միջոցով է կարելի յե ուղարկել դրամը:

Դրա համար հարկավոր է միայն Խնայողական Գանձարկղում լցնել հատուկ թերթիկ, և գանձարկղը ամեն բան քո տեղը կանի և կվերցնի միայն փոստի ծախսերը:

Միտք ունի արդյոք այդպիսի ծառայությունից հրաժարվել:

Ահա թե ինչի համար են հարկավոր Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղները:

Այն բոլորից հետո, յերբ քննեցինք Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղների աշխատանքները, հասկանալի յե դառնում նրանց խոշոր նշանակությունը խորհրդային հանրապետության մեջ և

այնուհետև պարզ ե, որ աշխատավորական անունը դրանց իզուր տեղը չի տրված։

Իրոք որ Աշխատավորական Խնայողական Գանձարկղները տարբերվում են թե նախկին ցարական գանձարկղներից և թե արտասահմանյան գանձարկղներից։

Բոլորովին հայտնի չե, թե մարդիկ ինչ նպատակով եյին մտցնում իրենց խնայողությունները ցարական խնայողական գանձարկղները. դրամը հենց ենպես հավաքում եյին, ինչպես ասում եյին «սև օրվա համար». մինչ դեռ, այդ դրամներով օգտվում եր բուրժուազիան։

Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղը սովորեցնում ե պրոլետարական խնամքով կատարած խնայողություն անել, որովհետև դրամը գանձարկղն ե մտցնվում որոշ նպատակով, այն ե բանվորա գյուղացիական կարիքները հոգալու նպատակով։

Առաջներում ցարի ժամանակ, որքան շատ դրամ եյին մտցնում Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղները, այնքան օգտավետ եր բուրժուազիայի համար։

Բուրժուազիան իր տիրապետության ժամանակ ամեն տեսակ միջոցներով հարստանում եր բանվորների և գյուղացիների աշխատանքի հաշվին և ստիպում եր նրանց աշխատել օրը 12 ժամ, յերբեմն՝ ել ավելի։

Գործարաններից, ֆաբրիկաներից և գյուղերից ու շեներից ցարական գանձարկղներն եյին հոսում աշխատավոր ժողովրդի դրամները։

Ցարական խնայողական գանձարկղներում լցված՝ արյունով և քրտինքով ձեռք բերած դրամները, ընկնում եյին բուրժուազիայի ձեռքը, որը այդ դրամները գործադրում եր պալատների կառուցման վրա, կալվածքներ ձեռք բերելու համար, մի խոսքով, դա իրենց օգուտ եր, իսկ աշխատավորներին վնաս։



Այժմ Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղների դրամները շրջանառության մեջ են դրվում արդյունաբերությունը բարձրացնելու, գյուղական տնտեսությունը վերականգնելու, ուսումնարաններ, մանկական տներ, մսուրներ ու ընթերցարաններ հիմնելու համար և այդպիսով ել միաժամանակ հենց աշխատավորների կյանքը բարելավելու համար։

Աշխատավոր բնակչությունը փոքր մուծանքներով մասնակցում ե իր յերկրի կազմակերպության և Խորհրդային Իշխանության ամրապնդման գործին։

Յերբ արտասահմանի բուրժուազիան իր օգուտների համար հիմնում ե խնայողական գանձարկղներ, դրանով նա թաքցնում ե իր կողոպտիչ նպատակները և հաճախ աներես ցույց ե տալիս, որ իբր վողորմություն ե անում, որովհետև օգնում ե աշխատավոր բնակչությանը «սև օրվա» համար դրամ հավաքելու։

Իսկ մեր Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղները գործում են աշխատավորների օգուտի համար։

Ով ծանոթանա Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղների աշխատանքի հետ, նա կհասկանա և կըմբռնի այդ աշխատանքը և նա անպայման կդառնա Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղի մշտական ավանդատու։

Յուրաքանչյուր ավանդատույի և խորհրդային հանրապետության քաղաքացու պարտքն ե բացատրել նրանց,

վորոնք չգիտեն Գանձարկղի աշխատանքի և նշանակության մասին և դրանով գրավեն Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղների ավանդատուներ։

Հանրապետությունների ամբողջ Միության Պետական Աշխատավորական Խնայողական Գանձարկղներում բանվորների և գյուղացիների հավաքած դրամները կգործադրվեն նոր կոմմունիստական կյանքի ընդհանուր գործի համար և դրանով կամրանա քաղաքի և գյուղի մերձեցումը։



## Ը.Ս.Ֆ.Խ.Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՆԱՅՈՂ. ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ՑԱՆԿ

| ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | ՎՈՐՏԵՂ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ |
|---|---|
| **Վրաստանում** | |
| 1. Անդրկովկաս. Գլխավոր Խնայ. Գանձարկղ . . . | Թիֆլ. Սոլոլակի փ. 12. |
| 2. Թիֆլիսի Կենտրոնական Խնայ. Գանձարկղ . . . | Վակզ. և Մալակ. անկ. |
| 3. Կենտր. Խնայ. Գանձարկղ Թիֆլիս ԳՖԻ-ում . . | Կաղնաչեյսկայա փող. |
| 4. » » » Ախալքալաքի » . . . | Ախալքալաք քաղաք. |
| 5. » » » Ախալցխի » . . . | Ախալցխա » |
| 6. » » » Բորչալվի » . . . | Լյուկսեմբուրգ » |
| 7. » » » Սղնախի » . . . | Սղնախ » |
| 8. » » » Թելավի » . . . | Թելավ » |
| 9. » » » Դուշեթի » . . . | Դուշեթ » |
| 10. » » » Գորիի » . . . | Գորի » |
| 11. » » » Քութայիսի » . . . | Քութայիս » |
| 12. » » » Փոթիի » . . . | Փոթի » |
| 13. » » » Ոզուրգեթի » . . . | Ոզուրգեթ » |
| 14. » » » Սենակի » . . . | Նոր-Սենակ. » |

| ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | ՎՈՐՏԵՂ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ |
|---|---|
| 15. Կենտր. Խնայ. Գանձարկղ Զուգդիդի ԳՖԲ-ում . . . | Զուգդիդի քաղաք. |
| 16. » » » Լեչխումի » . . . | Ցագերի » |
| 17. » » » Ռաչինի » . . . | Ոնի » |
| 18. » » » Շորապանի » . . . | Չիաթուրի » |
| 19. » » » Աբխազ. ՖԺԿ լիազ. Կ. Գ. Կից | Սուխում » |
| 20. » » » Հարավ. Ոսեթիայի » . | Ցխինվալի » |
| **Ադրբեջանում** | |
| 21. Կենտր. Խնայ. Գանձարկղ Գյանջայի ԳՖԲ-ում . . | Գյանջա քաղաք. |
| 22. » » » Աղդաշի » . . | Աղդաշ » |
| 23. Կենտր. Խնայ. Գանձարկղ Աղդամի ԳՖԲ-ում . . | Աղդամ » |
| 24. » » » Նուխիի » . . | Նուխի » |
| 25. » » » Նախիջևանի » . . | Նախիջևան » |
| 26. » » » Սալյանի » . . | Սալյան » |
| 27. » » » Լենքորանի » . . | Լենքորան » |
| 28. » » » Գյոքչայի » . . | Գյոքչա » |
| 29. » » » Շամխորի » . . | Շամխոր » |



| ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | ՎՈՐՏԵՂ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ |
|---|---|
| 30. Կենտր. Խնայ. Գանձարկղ Կուբայի ԳՖԲ-ում . . | Կուբա քաղաք. |
| 31. » » » Զաքաթալի » . . | Զաքաթալա » |
| 32. » » » Քյուրդիստանի . . | Աբդալլար » |
| 33. » » » Ղազախի » . . | Ղազախ » |
| 34. » » » Ջիբրայելի » . . | Ջիբրայել » |
| 35. » » » Շամախու » . . | Շամախա » |
| 36. » » » Լեռ. Ղարաբ. » . . | Ստեփանակերտ » |
| **Հայաստանում** | |
| 37. Կենտր. Խնայ. Գանձարկղ Լենինականի ԳՖԲ-ում | Լենինական քաղ. |
| 38. » » » Լոռի-Փամբակի » | Ղարաքլիս » |
| 39. » » » Դիլիջանի » | Դիլիջան » |
| 40. » » » Դարալագյոզի » | Դարալագյոզ » |
| 41. » » » Մեղրիի » | Մեղրի » |
| 42. » » » Զանգեզուրի » | Զանգեզ. Գորիս » |
| 43. » » » Նոր-բայազեդի » | Նոր-Բայազեդ » |
| 44. » » » Էջմիածնի » | Էջմիածին » |

| ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | ՎՈՐՏԵՂ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ |
|---|---|
| **Աջարիայում** | |
| 45. Բաթումի կենտր. խնայ. Գանձարկղ | Բաթում քաղ. |
| *Ադրբեջանի Միջնորդ Խնայող. Գանձարկղներ* | |
| 1. Աղնեֆտում | Բագու քաղ. |
| 2. Սուրախանի Շրջխորհուրդում | Սուրախանի » |
| 3. Ա. Պ. Մ. Խ-ում | Բագու » |
| 4. Ա. Կ. Կ. Կկ-ում | Բագու » |

# Ա. Ս. Փ. Խ. Հ. ՏԵՂԵՐՈՒՄ ՑԵՂԱԾ ՊԵՏ-ԱՇԽԽՆԱԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Ձեռնարկության տեսակը, վորին կից բացված է խնայող. գանձարկղն. |
|---|---|
| *I. խումբ* | |
| **Վրաստան** | |
| 1. Արասթուման (ավան) | փ. հ. բ. *) |
| 2. Արաշա » | փ. հ. գր. **) |
| 3. Ախալ-Սենակի (քաղաք) | փ. հ. գր. |
| 4. Ախալքալաք » | » |
| 5. Ախալցխա » | » |
| 6. Բաթում » | » |
| 7. Բորժոմ » | » |
| 8. Գորի » | » |
| 9. Ջիրուլի (ավան) | փ. հ. բ. |
| 10. Դուշեթ (քաղաք) | » |
| 11. Ցեկատերինոֆելդ (քաղաք) | փ. հ. գր. |
| 12. Ջեստաֆոն » | » |
| 13. Զուգդիդ » | » |
| 14. Քութայիս | » |
| 15. Լանչխութ (ավան) | փ. հ. բ. |
| 16. Մանգլիս (գյուղ) | » |
| 17. Նագոմարի » | » |
| 18. Ոզուրգեթ (քաղաք) | փ. հ. գր. |

*) փ. հ. բ. — փոստ-հեռագրական բաժանմունք.
**) փ. հ. գր. — փոստ-հեռագրական գրասենյակ.

| | |
|---|---|
| 19. Ոնի (քաղաք) . . | փ. հ. ր. |
| 20. Փոթի » . . . . | փ. հ. գր. |
| 21. Սամտրեդի » . . . . | » |
| 22. Սիգնախ » . . . . | » |
| 23. Բաթում յերկ. (կայարան) . | Յերկ. ուղ. փ. հ. ր. |
| 24. Սուրամ » . . | փ. հ, ր. |
| 25. Թիֆլիս » . . | փ. հ. գր. |
| 26. Թիֆլիս (կայարան) . . . . | Յերկ. ուղ. փ. հ. գր. |
| 27. Թիֆլիս 1 բաժ. . . . . . | փ. հ. ր. |
| 28. Թիֆլիս 2 բաժ. . . . . . | » |
| 29. Թիֆլիս 3 բաժ. . . . . . | » |
| 30. Թիֆլիս 4 բաժ. . . . . . | » |
| 31. Թիֆլիս 5 բաժ. . . . . . | » |
| 32. Թիֆլիս 7 բաժ. . . . . . | » |
| 33. Թելավ . . . . . . . . . | փ. հ. գր. |
| 34. Խաշուր . . . . . . . . | — |
| 35. Խոնի . . . . . . . . . | փ. հ. ր. |
| 36. Ցագվերի . . . . . . . | » |
| 37. Ցնորիս-Ծղալի . . . . . . | փ. հ. գր. |
| 38. Ցխինվալի . . . . . . . | » |
| 39. Ջոխաթաուրի . . . . . . | փ. հ. ր. |
| 40. Ջիաթուր . . . . . . . | փ. հ. գր. |
| 41. Շորապան . . . . . . . | » |

**Աբխազիա**

| | |
|---|---|
| 42. Գագրի . . . . . . . . | փ. հ. ր. |
| 43. Գուդաուտ . . . . . . | » |
| 44. Գուլրիպշ . . . . . . . | » |



| | |
|---|---|
| 45. Ոչեմչիրի. . . . . . . | փ. հ. ր. |
| 46. Սուխում. . . . . . . | փ. հ. գր. |

**Հայաստան**

| | |
|---|---|
| 47. Դիլիջան . . . . . . . | փ. հ. գր. |
| 48. Քարվանսարայ . . . . . | փ. հ. ր. |
| 49. Ղարաքլիս . . . . . . | փ. հ. գր. |
| 50. Ղարաքիլիսա . . . . . . | փ. հ. ր. |
| 51. Լենինական . . . . . . | փ. հ. գր. |
| 52. Նոր-Բայազետ . . . . . . | » |
| 53. Ստեփանավան . . . . . | փ. հ. ր. |
| 54. Յերևան . . . . . . . . | փ. հ. գր. |

**Ադրբեջան**

| | |
|---|---|
| 55. Ագդամ . . . . . . . . . | — |
| 56. Աղդաշ . . . . . . . . | փ. հ. ր. |
| 57. Հաջիկաբուլ . . . . . . . | » |
| 58. Աղստաֆա . . . . . . . | » |
| 59. Աստարա . . . . . . . | փ. հ. գր. |
| 60. Բագու-քաղաքը . . . . . | » |
| 61. Բագու-կայարան . . . . | Յերկ. ուղու փ. ր. |
| 62. Բագու բաժ. . . . . . . | փ. հ. գր. |
| 63. Բալախանի . . . . . . . | » |
| 64. Բարդի . . . . . . . . | փ. հ. ր. |
| 65. Բիբի-Հեյբաթ . . . . . | » |
| 66. Բելիյ-գորոդ . . . . . . | » |
| 67. Գյանջա-քաղաք . . . . . | փ. հ. գր. |
| 68. Գյանջա-կայարան . . . . | փ. հ. ր. |
| 69. Գեոքչա . . . . . . . . | » |

| | |
|---|---|
| 70. Ցեվլախ . . . . . . . . | փ. հ. գր. |
| 71. Ցելանինո . . . . . . . | փ. հ. ր. |
| 72. Զաքաթալա . . . . . . | փ. հ. գր. |
| 73. Ղազախ. . . . . . . . . | փ. հ. ր. |
| 74. Կարյագին . . . . . . | փ: հ. գր. |
| 75. Ղուբա . . . . . . . . | » |
| 76. Քյուրդամիր . . . . . . | » |
| 77. Կուսարի . . . . . . . | փ. հ. ր. |
| 78. Լենքորան . . . . . . | փ. հ. գր. |
| 79. Լյակի . . . . . . . . | փ. հ. ր. |
| 80. Նուխի . . . . . . . . | փ. հ. գր. |
| 81. Պետրոպավլովկա . . . . | » |
| 82. Պրիշիբ . . . . . . . . | փ. հ. ր. |
| 83. Սագիրի . . . . . . . . | » |
| 84. Ստեփանակերտ . . . . | փ. հ. գր. |
| 85. Սալյան . . . . . . . . | » |
| 86. Սուրախանի . . . . . . | փ. հ. ր. |
| 87. Տերտեր . . . . . . . . | » |
| 88. Ուջարի . . . . . . . . | |
| 89. Չյորնի-գորոդ . . . . . | փ. հ. գր. |
| 90. Շամախա . . . . . . . | փ. հ. ր. |
| 91. Շամքոր . . . . . . . . | » |
| 92. Շուշա . . . . . . . . | փ. հ. գր. |

**Նախիջևան**

| | |
|---|---|
| 93. Ջուղա . . . . . . . . | փ. հ. գր. |
| 94. Նախիջևան . . . . . . | » |
| 95. Որդուբադ . . . . . . | փ. հ. ր. |



## II խումբ

**Վրաստան**

| | |
|---|---|
| 1. Աբասթուման . . . . . | փ. հ. ր. |
| 2. Ալպանա . . . . . . . | » |
| 3. Անագա . . . . . . . | » |
| 4. Անակլիա . . . . . . | » |
| 5. Ասուրեթի . . . . . . | » |
| 6. Ախալրիխուլ . . . . . | » |
| 7. Բակուրյան . . . . . . | » |
| 8. Բաշկեչութ . . . . . . | » |
| 9. Բախվի . . . . . . . | » |
| 10. Վելիսցիխ . . . . . . | » |
| 11. Գոմբոր . . . . . . . | » |
| 12. Գուդաուտի . . . . . . | » |
| 13. Գուրջանի . . . . . . | » |
| 14. Գոմի . . . . . . . . | » |
| 15. Ջվարի . . . . . . . | » |
| 16. Դիդի Վանի . . . . . | » |
| 17. Դիդի Ջիխայիշի . . . | » |
| 18. Ցենիսելի . . . . . . | » |
| 19. Զեմոխիդի . . . . . . | » |
| 20. Կազրեկ . . . . . . | » |
| 21. Կվարելի . . . . . . | » |
| 22. Կվեմոճալա . . . . . | » |
| 23. Կվեմո-Մաչխանի . . . | » |
| 24. Կինչխա . . . . . . | » |
| 25. Կարալետ . . . . . . | » |
| 26. Կասպի . . . . . . . | » |

| | |
|---|---|
| 27. Բուլթայխս բաժ. . . . . | փ. հ. բ. |
| 28. Լայլաշի . . . . . . . | » |
| 29. Լիա . . . . . . . . | » |
| 30. Լիխաուրի . . . . . . | » |
| 31. Մարթվելի . . . . . . | — |
| 32. Մարանի . . . . . . . | » |
| 33. Մեջվրիս խևի . . . . . | » |
| 34. Մուխրանի . . . . . . | » |
| 35. Մցխեթ . . . . . . . | » |
| 36. Մուխիանի . . . . . . | » |
| 37. Նատանեբի . . . . . . | » |
| 38. Նաքալակևի . . . . . . | » |
| 39. Նիգոյիթի . . . . . . | » |
| 40. Նորիո . . . . . . . | » |
| 41. Պարցխանականևի . . . . | » |
| 42. Փասանաուրի . . . . . | » |
| 43. Փշավելի . . . . . . | » |
| 44. Սագարեջո . . . . . . | » |
| 45. Սադմելի . . . . . . | » |
| 46. Սաջևախո . . . . . . | » |
| 47. Սամիկաո . . . . . . | » |
| 48. Սարթաճալի . . . . . . | » |
| 49. Սաչխերի . . . . . . | » |
| 50. Սվիրի . . . . . . . | » |
| 51. Սուպսա . . . . . . . | » |
| 52. Թիֆլիս. քաք. 6-րդ. բաժ. . | » |
| 53. Թեթրի Ծղարո . . . . . | » |
| 54. Տկվիբուլի . . . . . . | » |
| 55. Խաբումե . . . . . . . | » |



| | |
|---|---|
| 56. Խարագաուլի . . . . . | փ. հ. բ. |
| 57. Խիդիսթավի . . . . . . | » |
| 58. Ցագվերի. . . . . . . | » |
| 59. Ցիթելի-Ցխարո . . . . . | » |
| 60. Ջակվա . . . . . . . | » |
| 61. Ճիլդա . . . . . . . | » |
| 62. Ճուլավեր . . . . . . | » |

**Աբխազիա**

| | |
|---|---|
| 63. Ախալի Գագրի . . . . . | » |
| 64. Գալի . . . . . . . . | » |

**Հայաստան**

| | |
|---|---|
| 65. Ալլավերդի . . . . . . | » |
| 66. Աշտարակ . . . . . . . | » |
| 67. Վորոնցովկա . . . . . | » |
| 68. Յելենովկա . . . . . . | » |
| 69. Ղամարլու . . . . . . | » |
| 70. Բեշիշքենդ . . . . . . | » |
| 71. Մեղրի . . . . . . . | » |
| 72. Միխայլովկա . . . . . | » |
| 73. Ներքին Ախտա . . . . . | » |
| 74. Էջմիածին . . . . . . | » |

**Ադրբեջան**

| | |
|---|---|
| 75. Ալթի-Ագաջ . . . . . . | » |
| 76. Բեյլասուար . . . . . . | » |
| 77. Բաքու 2 բաժ. . . . . . | » |

| | |
|---|---|
| 78. Վանք . . . . . . . . | փ. հ. բ. |
| 79. Կուտկաշէն . . . . . . | » |
| 80. Կախի . . . . . . . . | » |
| 81. Թոուզ . . . . . . . | » |
| 82. Խալդան . . . . . . . | » |
| 83. Խաչմազ . . . . . . . | փ. հ. գբ. |

Նախիջևան

| | |
|---|---|
| 84. Բաշնորաշէն . . . . . 1 | փ. հ. բ |
| 85. Ջանանար . . . . . 2 | » |
| 86. Շախթախտի . . . . . | » |

գրադարան
93278

ՀՀ Ազգային գրադարան
NL0193278